ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՄԱԿԻՉՅԱՆ Վ. Լ.

1960-ական թթ. վերջերից Գերմանիայում, Ավստրիայում և Շվեյցարիայում ապրող հայերը փորձեցին ստեղծել մի ընդհանուր միություն, որը պիտի ընդգրկեր գերմանախոս երկրներում գործող հայկական կազմակերպությունները՝ համայնքների ուժը և հնարավորություններն օգտագործելու ընդհանուր նպատակների համար[1]:

1969 թ. Ասխենում ձևավորվեց հայերի կենտրոնական մարմինը՝ «Հայկական միությունների միավորում» (այսուհետև՝ Միություն) անվամբ: 11 միություն և 8 մասնավոր անձինք նոյեմբերի 22-23-ին նիստ գումարեցին, որտեղ էլ ընդունվեց Միության կանոնադրությունը (հաստատվեց 1970 թ. փետրվարի 28-ին առաջին ատյանի դատարանի կողմից), և կազմավորվեց առաջին վարչությունը՝ պաստոր Ջեյմս Կառնուսյանի ղեկավարությամբ: Հետագայում Միությունը բազմիցս փոխել է իր անվանումը: Նշենք, որ նրա սկզբնական գործունեության հիմնական ոլորտը եղել է Հայոց ցեղասպանության խնդիրը[2]:

1993 թ. Միությունից անջատվեց Բոննում հիմնադրված «Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը» (այսուհետև՝ ԳԿԽ)՝ արդեն որպես գրանցված կազմակերպություն[3]: Այդ ժամանակ ԳԿԽ-ի նախագահ ընտրվեց Անդրանիկ Ազնավուրը, տեղակալը Մասիս Նահապետյանն էր, քարտուղարը՝ Պաուլ Գուլօղլուն, իսկ Ռուբեն Վասիլյանը հաշվապահն էր[4]: Կենտրոնական խորհրդին, բացի միավորումներից, կարող էին անդամագրվել նաև մասնավոր անձինք: Միության նստավայրը Մայնի Ֆրանկֆուրտում էր: Այսպիսով, ԳԿԽ-ն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հայերի, հայ համայնքի և հայկական միավորումների կենտրոնական, համընդհանուր միությունն է: Կանոնադրության համա-

---

[1] **Ordukhanyan A.** *Armenier in Deutschland. Geschichte und Gegenwart, Erfurt, 2008, S. 44.*

[2] **Kantian R.** *Armenisch-Deutsche Korrespondenz (ADK), Hannover, 2000, Ausgabe № 108, S. 28.*

[3] **Kantian R.** *Armenisch-Deutsche Korrespondenz (ADK), Hannover, 1993, Ausgabe № 79, S. 34.*

[4] *Նույն տեղում:*

ձայն՝ Կենտրոնական խորհուրդը կոորդինացնում է իր անդամների, անդամ-միավորումների բարեգործական և մշակութային հաստատությունների գործունեությունը, բարելավում գերմանական և հայկական կազմակերպությունների համագործակցությունը Գերմանիայում ապրող հայերի միջև[5]: Խորհուրդը հիմնականում ֆինանսավորվում է անդամ-միավորումների և առանձին անդամների կողմից վճարվող անդամավճարներով, նաև՝ նվիրատվություններով: Բացի այդ, ստանում է հատկացումներ՝ տարբեր նախագծերի տեսքով[6]: Չնայած զանազան դժվարություններին՝ ԳԿԽ-ի վարչությունը աշխատում է կանոնավոր ռիթմով: Նրա հիմնական նպատակը՝ Հայկական հարցին հետամուտ լինելը, իրագործվում է Բեռլինում Թուրքիայի դեսպանատան և Թուրքիայի հյուպատոսարանի առջև իրականացվող ցույցերի ու թուրքական պետական կառույցներին ուղղված բողոք-նամակների միջոցով[7]:

1994-ին ԳԿԽ-ի ղեկավար ընտրվեց Ասքանազ Ղարախանյանը: Համագործակցելով Գերմանիայի Հայ առաքելական եկեղեցու և ԳԴՀ-ում ՀՀ դեսպանության հետ՝ ԳԿԽ-ն աշխատանքներ էր տանում ոչ միայն ցեղասպանությանն առնչվող հարցերի, այլ նաև Հայաստանից գաղթած հայրի խնդիրների լուծման մասնավորապես հայապահպանության գործում: Խորհուրդը հետագա տարիների գերակա նպատակ էր համարում հայկական համայնքի երիտասարդության շրջանում նպատակաուղղված աշխատանքի կազմակերպումը, ինչպես նաև համագործակցությունը «Հայաստան» հիմնադրամի, Հայաստանի ու Արցախի շահագրգիռ կառույցների հետ[8]:

Ամեն տարի ապրիլի 24-ին ԳԿԽ-ն Գերմանիայում հայկական եկեղեցական թեմի հետ միասին Ֆրանկֆուրտի Սբ. Պողոս եկեղեցում կազմակերպում է մեծ միջոցառում՝ նվիրված 1915-1916 թթ. ցեղասպանության զոհերի հիշատակին՝ ջանքեր գործադրելով այդ միջոցառմանը քաղաքական, տնտեսական և մշակութային հայտնի գործիչների մաս-

---

[5] *http://www.zentralrat.org/en/satzung*

[6] **Zadoyan M.** *Migration und Integration: Migrationorganisationen und gesellschaftliche Partizipation das beispiel ausgewählter armenischer Vereine in Deutschland, Bochum, 2008, S. 42.*

[7] **Ordukhanyan A.,** *նշվ. աշխ., էջ 44:*

[8] **Kantian R.** *Armenisch-Deutsche Korrespondenz (ADK), Hannover, 1994, Ausgabe № 85, S. 41.*

նակցությունն ապահովելու[9]: Նրա կարևոր գործառույթներից է Գերմանիայի կառավարության ու հայկական համայնքի, ինչպես նաև Սփյուռքի ու Հայաստանի Հանրապետության միջև փոխհարաբերությունների ամրապնդումը:

ԳԿԽ-ի գործունեությունը, սակայն, Հայաստանի Հանրապետության կողմից գնահատվում է որպես խնդրահարույց և սակավ ձեռնտու, քանի որ Հայաստանի Հանրապետությունը ցեղասպանության հարցում ավելի հստակ ու չափավոր դիրքորոշում ունի, քան Հայկական սփյուռքը: Քաղաքական-վարչական համակարգի ներկայացուցիչների տեսակետների համաձայն՝ ԳԿԽ-ի օգնությունը երիտասարդ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդական համախմբման և ժողովրդավարության կայունության հաստատման գործում շատ չնչին է:

1999 թ. նոյեմբերին Ռաֆֆի Բեդիկյանից հետո ԳԿԽ նախագահ ընտրվեց Շավարշ Հովասափյանը, որն այդ պաշտոնում է ընտրվել ևս մի քանի անգամ՝ կառույցը ղեկավարելով մինչ 2009 թ.: Նրա նախագահության ժամանակ՝ ԳԿԽ-ն (2000 թ.) Գերմանիայի Բունդեսթագին Հայոց ցեղասպանության ճանաչման նամակ-խնդրագիր ուղարկեց: Ճիշտ է՝ այն մերժվեց, սակայն խոր հետք թողեց ցեղասպանության ճանաչման գործընթացում: Միայն այն հանգամանքը, որ այդ խնդրագրի տակ ստորագրել էին հազարավոր մարդիկ և հարյուրավոր կազմակերպություններ, խոսում էր գործի լրջության և կատարված աշխատանքի մասին:

Խնդրագրի տակ իրենց ստորագրություններն էին դրել գերմանական, հայկական, ասորական, հունական, հրեական և թուրքական կազմակերպություններ, որոնք զբաղվում էին մարդու իրավունքների պաշտպանության, քաղաքական, գիտական և մշակութային գործունեությամբ, ինչպես նաև աշխարհի այլևայլ վայրերում բնակվող անհատներ: Շ. Հովասափյանի ղեկավարման տարիներին կարևորվում էին հատկապես երիտասարդների հետ տարվող աշխատանքները. կազմակերպվում էին տարբեր միջոցառումներ՝ երիտասարդների մեջ ամրապնդելու հայապահպանության գաղափարը[10]:

2000-ական թթ. կեսերից ԳԿԽ-ի ներսում ի հայտ եկան հակասություններ և տարակարծություններ՝ Միության հետագա քաղաքական գործունեության և եվրոպական կազմակերպությունների հետ հնարավոր

---

[9] *http://www.zentralrat.org/de/dokumente*

[10] **Ordukhanyan A.,** *նշվ. աշխ., էջ 47:*

համագործակցությանը վերաբերող հարցերի առնչությամբ: Այս ամենը հանգեցրեց ձգվող վիճաբանությունների և ներքին գժտությունների:

2009 թ. ԳԿԽ-ի հաջորդ նախագահ ընտրվեց Ազատ Օրդուխանյանը: Նոր վարչությունը, ավանդական աշխատանքներին զուգահեռ, որոշեց մայրաքաղաք Բեռլինում հաստատել իր գրասենյակը, ապա նախաձեռնել ու երեք տարում հիմնել հայկական գրադարան ու արխիվային կենտրոն, որը ոչ միայն պիտի ամփոփեր օրեցօր մեծացող գերմանահայ համայնքին առնչվող վավերագրերը, կենտրոնացներ համայնքային բոլոր արխիվներն ու համատեղեր ընթացիկ համայնքային գրագրությունը, այլև գրադարանի, ձայնադարանի ու ֆիլմադարանի հետ աստիճանաբար վերաճեր հայկական գիտահետազոտական կենտրոնի[11]:

Օրդուխանյանը զգալի ներդրում ունեցավ Գերմանիայի կառավարության հետ, ինչպես նաև Գերմանիայի հայկական համայնքի և Սփյուռքի փոխհարաբերությունների զարգացման գործում: Նա հանդիպումներ էր ունենում Բունդեսթագի պատգամավորների հետ՝ իրականացնելով քննարկումներ՝ Հայոց ցեղասպանության հարցի հետ կապված[12]: Նրա նախագահության տարիներին, համախմբելով ԳԿԽ-ի ու համայնքի ուժերը, հիմնվեց սիրիահայ համայնքին աջակցող կոմիտե, որը տարբեր հանգանակությունների միջոցով նպաստում է սիրիահայերի առջև ծառացած խնդիրների լուծմանը[13]:

Հետագայում ԳԿԽ-ում տեղի ունեցած պառակտումների հետևանքով ի հայտ եկան նոր խնդիրներ, որոնք ԳԿԽ-ի կանոնակարգի ու ներքին տարաձայնությունների արդյունք էին[14]: Այս հարցերին լուծում տալու համար 2014 թ. հունվարի 25-ին հրավիրվեց ընդհանուր ժողով (նախագահ՝ Միհրան Դաբագ): Լարված մթնոլորտում ընթացան քննարկումները, քանի որ նախկին վարչությունը հրաժարական էր տվել հաշվապահության՝ ոչ պատշաճ որակների պատճառով[15]: ԳԿԽ-ի նախագահ

---

[11] http://www.zentralrat.org/de/dokumente

[12] Նույն տեղում:

[13] http://www.zentralrat.org/en/node/10917

[14] https://armenpress.am/arm/news/741625/

[15] http://www.hay-society.de/haysociety/gesellschaft-a-politik/292-krise-des-zad-neuanfang-fehlanzeige-

ընտրվեց Նազարեթ Աղեկույանը[16], որին 2015 թ. նոյեմբերի 15-ին հաջորդեց Ժագլին Խաչատրյանը[17]:

Ներկայումս ԳԿԽ-ի հովանու ներքո գործում են մեկ տասնյակից ավելի հայկական կազմակերպություններ, ինչպես նաև հարյուրավոր անդամներ: ԳԿԽ-ն փորձեց Դաշնային հանրապետությունում հայերի շահերն արտահայտել Գերմանիայում Հրեաների կենտրոնական խորհրդի օրինակով, սակայն այս ծրագիրը ձախողվեց, քանի որ ոչ բոլոր հայկական միավորումներն էին անդամակցում Կենտրոնական խորհրդին: Բացի այդ, չնչին էր Խորհրդի կազմում գրանցված անձանց թիվը՝ Գերմանիայում բնակվող հայերի քանակի համեմատությամբ, ուստի նրա համար դյուրին չէ Գերմանիայում գտնվող հայերի մեծամասնության աջակցությունն ստանալ պետական հաստատություններին իր պահանջները ներկայացնելիս:

ԳԿԽ-ի քաղաքական գործունեությունը հիմնականում իրականացվում է համացանցում հրապարակվող հայտարարությունների և բաց նամակների հիման վրա: Նրա համագործակցությունը հայկական, հայ-գերմանական և հայանպաստ այլ կազմակերպությունների հետ ընդհանուր առմամբ կրում է կանոնավոր բնույթ, չնայած, ըստ որոշ փորձագետների կարծիքների, այն աստիճանաբար վերածվում է առանձին, մեկուսացած կառույցի, որը հայերի շահերը ոչ բավարար չափով է ներկայացնում: ԳԿԽ-ի գործունեության վրա ևս հայկական կազմակերպությունների ազդեցությունը տարբեր կերպ են գնահատում փորձագետները: Նրանք ամենամեծ տեղը հատկացնում են ՀՅԴ-ին, որը հայերի ամենաազդեցիկ կուսակցությունն է Սփյուռքում: Սակայն ԳԿԽ-ի ղեկավարությունը ժխտում է Դաշնակցության ազդեցությունը Միության վրա:

Այնուամենայնիվ, կարճ ժամանակահատվածում ԳԿԽ-ն զգալի աշխատանքներ է կատարել գերմանահայ համայնքին, հայ-գերմանական հարաբերություններին և հայ ժողովրդին ու Հայաստանին առնչվող տարաբնույթ խնդիրների լուծման ուղղությամբ:

---

[16] http://www.zentralrat.org/files/kermaneren_neu.pdf

[17] http://www.zentralrat.org/en/node/11051

ЦЕНТРАЛЬНЫЙ СОВЕТ АРМЯН В ГЕРМАНИИ

МАКИЧЯН В. Л.

Резюме

Еще с конца 1960-х гг. в германоязычных странах Европы велись работы по созданию такой организации, которая объединила бы все армянские организации и общины.

В 1969 г. в Аахене был сформирован центральный орган обосновавшихся в германоязычных странах армян, который был назван “Союз армянских объединений”, а в 1993 г. на основе этого союза в Бонне был основан “Центральный совет армян в Германии”. Последний должен был играть координирующую роль для организаций-членов и частных лиц. Финансирование Совета осуществлялось благодаря членским взносам и пожертвованиям.

Деятельность Совета во многом способствовала признанию геноцида армян.

В настоящее время Совет координирует работу входящих в него более десяти организаций и частных лиц.

THE CENTRAL COUNCIL OF ARMENIANS IN GERMANY

V. MAKICHYAN

Abstract

Since late 1960s, many attempts have been made in German speaking countries to create an organization, which will shelter all the Armenian organizations and communities under one roof.

In 1969 the central body of German speaking Armenians was formulated in Aachen called “Union of Armenian Unities”, and in 1993 the “Central Council of Armenians in Germany” was isolated from that union and was formulated in Bonn. The board was to undertake the role of a coordinator for its member organizations and individuals. The board was financed by membership fees and donations.

In the flow of time the “Central Council of Armenians in Germany” played a central role in organizing events and the procedure of recognizing Armenian Genocide.

Sometimes there occurred contradictions and disagreements in reference to the further activities of the board.

At present, more than 10 organizations and hundreds of members are under the auspice of the “Central Council of Armenians in Germany”.